



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2010 թվականի N 863 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N 1325-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետի երկրորդ պարբերությունից հանել «պետական գրանցում ստացած՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի (այսուհետ՝ կենտրոն) հետ կնքված ՀԴՄ-ի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները)՝ մինչև ՀԴՄ-ի գրանցումն այդպիսի պայմանագրի կնքման դեպքում,» և «կենտրոնի հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև» բառերը.

2) 3-րդ բաժնի վերնագրից հանել «, տեխնիկական սպասարկումը և նորոգումը» բառերը.

3) ուժը կորցրած ճանաչել 13-րդ, 14-րդ կետերը, N 1 ձևի 8-րդ և 9-րդ կետերը, NN 2 և 3 ձևերը.

4) 17-րդ կետից հանել «և կենտրոնների հետ կնքված պայմանագրերը» բառերը.

5) 21-րդ կետում «սպասարկող կենտրոն է ներկայացնում» բառերը փոխարինել «տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կենտրոն) ներկայացնում է» բառերով.

6) N 5 ձևում «Սպասարկող կենտրոնի» բառերը փոխարինել «Կենտրոնի» բառով.

7) N 10 ձևում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 5-րդ կետը,

բ. հանել «տեխնիկական սպասարկում և վերանորոգում իրականացնող կենտրոնների հետ կնքված պայմանագրերը՝ \_\_\_\_\_ թերթ, » բառերը.

8) N 11 ձևից հանել

«Տեխնիկական սպասարկումը և նորոգումը կատարում է \_\_\_\_\_

(տեխ. սպասարկում և

\_\_\_\_\_ ) տողերը:

նորոգում իրականացնող կենտրոնի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, պայմանագրի համարը)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հուլիսի 19  
Երևան